

ի ձեռին կամ սրինգ ի բերան՝ վեր ի վայր ոստոստելով պէսպիսի կարաւչական կերպաւորութեամբ ներկայացնեն՝ արտասովոր իմն ներդաշնակութեամբ՝ «իրը նեն» վեց տառերն:

Ս. Տէր Մ. Գրիգորյան

(Եարայարելի)

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Եար. տես Բաղմ. էջ 39)

Զեմ կրնար ձեռք թողու զեռ Գագիկ Հեթումեան թժշկարանը, զոր արդէն նըռ կատեցի՝ իրը և ամենահնին և եղականը՝ գէթ առ այժմ, և կարեոր կը համարիմ զրել անոր մասին դոյզն տեղեկութիւններ ևս, քանի՞ որ ըսի թէ հետագոյ Հայ բժշկարան-ները մեծագոյն մասամբ ձուլուած են անոր վրայ, կամ զրուած՝ անոր հետեւողութեամբ թժշկարանիս սկզբնական վեց մաշած թերթերուն համար հարեանցի մը քրած եմ նախապէս, թէ Արիստոտէլի անդամազնական գործերէն բաղուած մ'ըլլալ կը թուի, բայց այժմ՝ անոր այդ մաշած մասերը կարենալ կարգալէ վերջ, կը զիտեմ, թէ աւելի Գրիգոր Նիւսացիի մարդակազմութենն է այն՝ քան թէ ուրիշ տեղէ. հետևարար պէտք է վերաբերի այն Բ.Պ.Դ գրու նշանաւոր Գրիշ Ստեփանոս Եպիսկոպոս Սիւնեցիին, որ ինչպէս գիտնեն՝ Գրիգոր Նիւսացիի մարդակազմութենը՝ կամ Յաղագ թիւրեան մարդոյ գիրը թարգմանած է 717ին կ. Պոլսոյ մէջ:

*

Կ'արժէր որ անկէ քանի մը մասեր՝ արտատպէի հոս, բայց ուրիշ առթի վերապահելով այդ դժուարին գործ՝ բաւ կը համարիմ առ այժմ զրել միայն անոր վերջարանական մասը՝ որ է.

« Ով սիրելիք և պատուական եղարք « որ բերենուոր և բար զմարդասիրութիւնն « Ասոսնոյ, որ զայսպիսի հակասուս, դ, « տարիցու ի միասին զոյացուցի է, և կա « տարեալ սունդեց զելեց մարմնավ և աւ « մեհայն անդամաւր, և հեման արարեկ զելեց « երկեի և երկիր զազանաց և անսանց « Ասոսնոյ և հրեշտակաց, որում և աս « զամենայն արտաքս ի պէտու մեր գիտունն, « զիտունն, զգազանի և զանասունն, զուտ « դունն և զրունն ի ծառայութիւնն մեր, « որպէս և ինքն հրամայց և ասէ. եկարք « արացուք մարդ զրաս պատկերի մերուն « և բատ հետեւորեան և իշխանց ձկանց « ծովու և ամենայն սովեոց, զի ինքն Քրիստու « տոս արհենու և յափտեան ամեն» :

Եւ բոլոր բժշկարաններուն մէջ կը զըտնենց նիւսացիին Անդամազնութեան այս կտորը, զրեթէ նոյնութեամբ, նոյն բառերով կամ թիւ փոփոխութեամբ :

*

Գագիկի բժշկարանէն՝ նախորդ յօդուածիս մէջ քանի մը մէջքերումներ արդէն ըրած ըլլաւուզ՝ չեմ անդրադառնար անոր, բայց կը զրեմ մաս մը այն բառարանէն՝ որ կից է բժշկարանիս, և որ կը կրէ «բարգմանութիւն անուտեց գեղոց յայլ իշխաց ի մերս» զերնագիրը: Չորս էջ կը զրաւէ այն այրուբենի կարգով, և կը սկսի.

Աֆրիմուն ի կրիսն լիճի, հնամ և ծայրըրեի ևնդի, — Աֆիմուն որ և խաշիցին և հազրի իւեմն: — Ալբայրուք՝ թենեկնոյ իւեմ: — Ասկանիակրան՝ մէկնեսուխն: — Արրուանն բարձրեկեկի: — Արիոր՝ վաղենուփ: — Բարսուշնո՞ ծիւել: — Գազմագիձ՝ զմունպուուի: — Գունա՝ վայրի սուկզիիի հունու: — Խիարշամբար՝ ի հեղիսաց զայ: — Հերիօնի ծեներեկի: — Կեղրուկ՝ հայխունեկի: — Կատաւամա՝ կոտիմնն: — Կորդուն՝ ծայրըրին: — Հայիշալշար՝ սամիր: — Հումայուի րրիկիմ: — Ղափէր՝ որ և երեսնակն այլք ասեն դաշարաւ և հումերէն պատերին,

խոտ է՝ բիզույերկայն ի ճայրի ծիրանի ծաղիկ։
— Մրգիր՝ հարվորուի։ — Մազարիս՝
տերեւատ։ — Մամիքան՝ հողմափայտու։ —
Ուձ՝ բաշխատի։ — Պէտառէկինա՝ վայրի
քրէվս։ — Պրիեց՝ շախրան՝ որ և վայրի
խաշխաչ։ — Պապունիք՝ խնձոր խոտն է։
— Զանդիան՝ երջնանի տակ՝ ի կրիսն
լինի։ — Ռեման՝ խաչըդի։ — Ռասեն՝
կրզմուխ։ — Ռասառողը՝ յօնից քար, և և՝
այրած պղինձ։

Եւ այս բոլոր բառերը՝ կարգաւ և ա-
ւելի ընդարձակ կը գտնենք հետագայ բոլոր
բժշկարաններուն մէջ, որոնց՝ կամ այն է
թէ ասկէ օրինակուած են, և կամ աւելի
ճշուագիր նախատիպ մը ունեցած են։

*

Բայց որո՞ւ գործը կրնար ըլլալ արդեօք
այլ նախատիպ օրինակը։

Տեսանք որ այս բժշկարանին համար
պրուած է՝ թէ թարգմանուած է Գագիկ
յաղթող թագաւորին ժամանակը, և թէ
այս Գագիկը՝ ըստ Հ. Ալբէն Սուբրեանի
և Հ. Ալբէնդ Յովաննանի՝ պէտք է ըլլայ
Գագիկ Ա. մեծայալզ թագաւորը, որ իշ-
խած է Քրիստոսի 990—1020 թուա-
կանին։ Արդ այս թագաւորին ժամանակ-
ներն է որ կը ծաղկի գիտունն Պրիգոր
Մազիստրոս, այն՝ որ ունի բժշկական
սրբնչելի գորուածներ իր համբաւաւոր
թիւկթերնեն մէջ¹, և բժշկական դասա-
ւանդութիւններ ըրած է Անսանին հոչա-
կաւոր վանքին մէջ, ինչպէս պատմած եմ
մանրամասն՝ երր 1920ին կ. Պոլսոյ Հայ
բժշկական միութեան մէկ նիստին կը կար-
դայի այս մասին աշխատութիւն մը²։

1. «Գրեգոր Մագիստրոս Թուաթեան» կ. Կոստա-
նեաց. Աղեքսանդրապու 1910, էջ 314-315.

2. «Իւրցու» կ. Պոլսոյ 6 յունիս 1920 էջ 83-86.

3. «Արքայս» ամսագիր Եղմիածին 1909, թիւ յուլիս
— օգոստոս, էջ 590։

Արդեօք չե՞նց կրնար Գրիգոր Մազիս-
տրոսի գործը համարել Գագիկի օրով կա-
տարուած թարգմանութիւնը այս բժշկա-
րանին։

Ուրիշ առթի թողլով աւելի բացայայ-
տել այս յոյժ կարեւոր կէտը՝ կը փութամ
ըսել, թէ շատ հաւանական է որ էջմիածնի
Մատենադարանին ճեռագիր բժշկարանը
որ ԶիԵ, այսինքն (725 + 551 ==) 1276
թուականը կը կրէ և աւելի հին է, թէրևս
այս բժշկարանին աւելի ճշգրիտ մէկ օրի-
նակն ըլլայ, ինչպէս նաեւ Երուսալէմի
վանը գտնուած ճեռագիրը, որ վերաբե-
րած է՝ «մեծի և բարեպաշտ իշխանին
Սևաստոսին Հերմոյ որդոյ Աւանի բարե-
պաշտի»³։ Ա. Ղազարի ճեռագրին Հեթումն
է այս որ Սևաստոսութեան (մարածախ-
տութեան) պաշտօնը ընդունեց 1294-1307
ժամանակամիջոցին։

*

Ակնարկ մ'ալ բժշկարանին Գ. Րդ մասին
վրայ ու վերջացնեմ։

Այս այն մասն է, որու համար ըսի թէ
Միութար Հերացիի աշխատութիւնը ըլլա-
լու է, Բաւական մանրամասն խօսեցայ
արդէն անոր վրայ, բայց մէջրերումներ
անէ զրեթէ շըրի, ուստի անոր զանազան
տեղերէն կը բաղեմ քանի մը կտոր՝ որ
ոյց կու տան թէ անոնց ծառայած են
ուրիշ բժշկարաններու խմբագրութեան, զոր
օրինակ։

*

«Վասն ամենայն ցեղ բոքացաւորեսն։
«Եւ իր նշան այս է՝ մարդոյն շերմու-
«թիւն զիպի և զշունչն չկարէ կրկնել
«և թէ երեսն կարմիր է և ի յայտ ի ներս
«կուրծքն ցափի և ծանրնա և հուզա՝ այս
«է նշան թոքացավի։

«Երակ ի բասիլիկէն և մտապուի այս։

«Չոր թուզ սպիտակ թէ հատ. մատու-
«տակ Դ. Ղ. Ղ.՝ յունապ իլլ. հատ. խորա-
«սանի չամիչ կտված ի. Ղ. զպսթան

« Աղ հատ, չոր մանիշակ Դուզր՝ ջուր Բ. Լա
« եփէ որ մնա ձ՛զը քամէ և ած ի ներս
« խիսաշամբրի մէջ ժ. գր արորէ գեղերովու
« և ի ներս խառնէ և ճուլապ ժե. գր և
« զամբնդ միաւորէ և խմցու տաց »:

« Որո կուշտն ցաւի կողիցն ներքեւ
« խոցտելով, մանավանդ թէ ցամար հազ
« զա և ջերմութիւն լինի՝ և ցաւն կող-
« խառն՝ եթէ զայս նշանիս տեսնես՝ ի
« քասիլիկէն երակ ի յայն դեհն ուր խիստ
« ցափ. և թէ ցաւն կողիցն ներցե լինի
« ի ներս ի կուշտն և լինի խիստ ծարաւ
« և ջերմութիւն, զերակտ առ և շինէ մըտ-
« պուխ զայս »:

« Պղպեկ Դ. գր՝ սամիս ժԾ. գր. աղա
« մադէ մեղրով շաղէ և տուր ի զզթորի
« չաք և ի հետ տաք ջուր Ա. կթխա փոքր
« և զարեջուր շաբարով և նշի ձիթով
« և այլն »:

*

Լեզուի յատակութիւնը մանաւանդ Ջեր-
մանց Միիրարուրին շաբարութեան հետ
ունեցած սերտ նմանութիւնը դիտողութեան
առնելով՝ կարելի չէ զայն ներացիէն զատ
ուրիշ վերագրել :

Ուրիշ օրինակ մ'ալ.

« Վասն զանձականի՝ մամացի և քարի
« որ առ մարդ լինափի՝ Յորժամ առ մարդ
« քար ընձափի և կամ՝ զանձակագլութիւն և
« կամ միզազրաւի՝ որ ի բուշտն լինի և յի-
« բիկամունսն լիսացեալ է զաղիանու՝ թէ
« այս ցաւոց ընծայօղը են Ա. ցեղ կաթն
« հին և նոր պանիր՝ կորկոռ՝ կճակ՝
« չոր հաց՝ քաղաք՝ պղտոր ջուր և թանձր
« զինի՝ Մամացն՝ որ կարիճ մոռ և ճորտ
« մոռ է՝ և քարիրուշան լինի, և ալորին՝
« յերիկունքն լինի. և նշ՝ որ մէջքն
« ցափ՝ գոզն արգիլի՝ և դու զեղ արա
« որ զզողի ճանրալն սրբէ և յորդիք. զի
« եթէ ճանրալն լվանվի և գոզն յորդորէ՝
« այլ պաճառ չկա քար ընծաել »:

*

Իրբէ բժշկական գրուած արժէքաւոր է
գրուածը և զուրկ չէ զիտական յատկու-

թենէ, բայց մեղադրելի սխալներով գրուած
է բոլորը, այնպէս որ տեղ տեղ կատա-
րելապէս անընթեռնլի է:

Ժամանակի ըննութեան և հետախու-
զութեան կը թողում յայսնել թէ արդարեն
Միիթար Հերացիի՞ կը վերաբերի այն՝
թէ ուրիշի մը, և առ այժմ ես չեմ զա-
դրիր այս թժշկարանը նկատել Հայ թժշ-
կական պատմութեան թանգ մէկ գանձը,
որ կը պահանջէ զեռ երկար ուսումնասի-
րութիւն, զոր սիրով պիտի կատարէի,
եթէ Ս. Ղազարի վանքին միւս Զեռագիր
թժշկարանները ըլլային: 60էն աւելի են
անոնք, և ուրախ եմ յայտարարելու թէ
Կարողացայ բոլորն ալ աչքէ անցընել և
պատրաստել անոնց մասին աշխատութիւն-
ներ, որոնք լոյս կը տեսնեն հետզիւտէ:

(Ժարութակելի)

Տօրի. Վաւելար թ. Թորոսիսեան

Վենեսիլի — Ս. Ղազար

12 Գեկտեմբեր 1922

Ե՞՞Ն Զ Է Ե Բ Ի Ա Ժ Շ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

Երաժշտութիւմը լեզու մ'է, զոր գտաւ համ-
արը՝ սիրոյ համար:

Ա. ՏԸ ՄԻՒՍՍԵ

-**-

Երաժշտութիւմը բոլոր արուեստերում մէջ
ամենին զօրաւոր է, վասն զի յափշտակէ
զմեզ աշխարհէմ՝ ուր կանք, և կը փոխադրէ
զալափարական բժակարանի մը մէջ՝ ուր
ամէմ իմէ ներդաշնակութիւմ և գեղեցկու-
թիւմ է:

ՃԻՌՊԵՐԻԴԻ

-**-

Բաթաստեղծութիւմը՝ բառերով շիմուած և-
րաժշտութիւմ մ'է, երաժշտութիւմ՝ ձայներով
շիմուած բամաստեղծութիւմ մը:

ՖՈՒԼՈՐ